ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Սույն հարապարակային փաստաթղթում արտացոլված են «**Հելփս Քընսալթինգ**» **ՍՊ Ընկերության** (*ՀՎՀՀ՝ 04232567, գրանցման համար՝ 51.110.1047537, այսուհետ՝* ***Ընկերություն***) *https://helps.academy* կայքի (այսուհետ՝ Կայք) միջոցով դասընթացների և վերապատրաստումներ գրանցման հիմնական պայմանները: *https://helps.academy*-ը հանդիսանում է *Ընկերության դասընթացների և վերապատրաստումների պաշտոնական կայքէջը*:

Սույն փաստաթուղթը տարածվում է նաև Google Form էլեկտրոնային համակարգով գրանցման հայտերի վրա և այդ հայտում «Այո» նշում համարվում է պայմանագրի ստորագրում: Նույն կերպ է նաև կայքէջի սույն փաստաթղթի համար նախատեսված դաշտի ընտրության դեպքում:

Օգտագործված հասկացություններ.

Կայք/կայքէջ - Ընկերության https://helps.academy/ դասընթցների և վերապատրաստումների ինտերնետային հարթակ:

Պաշտոնական կայք/կայքէջ - Ընկերության https://helps.am ինտերնետային հարթակ:

Սոցիալական էջ/եր/ - Ընկերության սոցիալական հարթակներում (Facebook, Instagram, Linkedin և Youtube) գրանցված էջեր:

Պայմանագիրը (Օֆերտա, Ակցեպտ) – դասընթացների գրանցման համար հրապարակային իրավական ակտ, որի պայմաններին համաձայնության նշման դեպքում է հնարավոր միայն իրականացնել դասընթացի գրանցում:

Վճարային քարտ – Հայաստանյան կամ արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի կողմից թողարկված բանկային/վճարային քարտ(ArCa, VISA, MasterCard, AmEx, DinersClub, JSB, UunionPay և այլն):

Սպասարկվող վճարային քարտեր – Բոլոր այն վճարային քարտերը, որոնք կայքում տեղադրված բանկի վճարային համակարգի միջոցով հնարավոր է իրականացնել անկանխիկ վճարում:

Էլեկտրոնային դրամապանակ – Վճարային դրամապանակ, որով հնարավոր է իրականացնել անկանխիկ վճարում (օրինակ՝ iDram, TelCell, FastShift և այլն):

eMail - էլեկտրոնային փոստ, որին կամ որից ուղարկվում և/կամ ստացվում է էլեկտրոնային հաղորդագրություններ:

3Ds անվտանգության համակարգ - Ինտերնետային առևտրի կետերում քարտային գործառնությունների անվտանգության բարձրացման նպատակով գործում են ArCa 3-D Secure, MasterCard® SecureCode™ և Verified by Visa® (VbV) համակարգերը, որոնք ապահովում են նշված համակարգերին անդամակցած առևտրի կետերում ArCa, MasterCard և Visa քարտերով կատարվող գործառնությունների անվտանգության ժամանակակից մակարդակ՝ հիմնված SMS հաղորդագրությունների և/կամ այդ նպատակով Բանկին տրամադրված էլ. հասցեի միջոցով հաճախորդին ուղարկվող մեկանգամյա գաղտնաբառերի վրա:

Rocket Line - Rocket Line-ը նորարարական թվային ապառիկ է՝ ինովացիոն գործիք առցանց և անհպում գնումների ոլորտում: Rocket Line-ը նախապես հաստատված սահմանաչափ է, որը

միշտ հասանելի է հաճախորդին իր Idram&IDBank հավելվածում: Գործարքի պահին թվային ապառիկ է ձևակերպվում միայն օգտագործված գումարի չափով: Rocket Line-ը աշխատում է և Idram&IDBank հավելվածով, և վեբ տարբերակով վճարումների ժամանակ: Առավել մանրամասն բանկի շատոնական կայքէջում՝ www.idbank.am:

PayLeater - Վճարման ժամանակակից տարբերակ, որը հաճախորդներին տրամադրում է InecoMobile-ով վճարումներ կատարելու սահմանաչափ՝ հնարավորություն տալով կատարել գնումներ հիմա և վճարել դրանց համար 3 կամ 6 ամսվա ընթացքում՝ առանց որևէ լրացուցիչ վճարի: Helps Academy-ի համագործակցության շրջանակում տրամադրվում է 3 ամիս ժամկետով: Առավել մանրամասն բանկի պաշտոնական կայքէջում՝ https://www.inecobank.am:

ArCa Link - հղում, որը տրմադրվում է Ընկերության կողմից վճարողին՝ Հայաստանյան կամ արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի կողմից թողարկված բանկային/վճարային քարտերով դասընթացների գրացման վճարը վճարելու համար: ArCa Link-ով կատարված բոլոր վճարումների վրա տարածվում է սույն դրույթներով ամրագրված իրավունքներն ու պայմանները:

Վճարող - իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր, որը կատարում է դասընթացի մասնակցի գրանցման վճարը և հաստատում է, որ տեղեկացված է ու գիտակցում է, որ նշված վճարը վերադարձման ենթակա չէ, բացառությամբ կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ սահմանված ընթացակարգի դեպքերի:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ:

- Կայքում հրապարակված դասընթացի գրանցման գործընթացը կարգավորվում է սույն «Ընդհանուր դրույթներ և պայմաններ»-ով:
- Եթե վճարային քարտը կամ վճարային քարտը թողարկող բանկը չի ապահովում 3Ds անվտանգության, ապա Կայքը պատասխանատվություն չի կրում առաջացած ռիսկերի համար:
- Գրանցման վճարները հետվերադարձման ենթակա չեն:
- Եթե Հաշիվ-վավերագրերը կամ Հարկային հաշիվները դուրս են գրվում Սոցիալական ծախսի նշմամբ, ապա դուրս գրումից հետո հաշիվները չեն չեղարկվում և գումարն ամբողջությամբ ևս չի վերադարձվում:
- Դասընթացի գրացման հայտը ներկայացնելուց հետո հայտատուն կարող է փոփոխել և/կամ չեղարկել դասի գրացման հայտը ներկայացնելուց հետո 7(յոթ) օրվա ընթացքում[1]: Այն դեպքում, երբ դասընթացի մեկնարկին մնացել է 7(յոթ) և ավելի քիչ օրացուցային օրեր, ապա գրացման հայտի ներկայացումից հետո չեղարկել հնարավոր չէ:
- Յուրաքանչյուր ուսանողին տրվում է 1(մեկ) ուսանողական արձակուրդ: Ուսանողական արձակուրդի ժամանակ քննարկվում է հաջորդիվ մեկնարկվող դասերից մեկում բաց թողնված մասից կամ մեկնարկի սկզբից մասնակցելու/շարունակելու հնարավորությունը: Որի համար առանձին վճար Ընկերություն չի գանձվում:

[1] Հետհաշվարկն իրականացվում է 7օր*24ժամ=168 ժամ հաշվարկով:

Սույն պայմանները համարվում են հրապարակային առաջարկ (Օֆերտա) հաճախորդների հետ հարաբերությունները կարգավորելու նպատակով և դրանք կարող են թարմացվել Ընկերության կողմից՝ սեփական հայեցողությամբ:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն պայմանագիրը (Օֆերտան) կնքելու լրիվ և անվերապահ համաձայնություն (Ակցեպտ) է համարվում Կայքի միջոցով դասընթացի գրանցման համար հայտի ներկայացման և վերջինիս համար առցանց կամ բանկային փոխանցման(ներառյալ վճարային քարտով, էլեկտրոնային դրամապանակով) միջոցով վճարում կատարելու համար, որպես դասընթացի մասնակից:

1.2. Կայքում ներկայացված են բոլոր այն դասընթացների թեմաները ըստ մեկնարկի և ավարտի ժամկետների, որոնք որ ընկերության կողմից պետք է իրականացվեն: Յուրաքանչյուր դասընթացների համար հրապարակված վճարման ժամկետներից դուրս կատարված վճարումների համար վճարողն անձամբ է կրում պատասխանատվություն:

1.3. Դասընթացի վճարումը պետք է իրականացնել բացառապես անկանխիկ.

1.3.1. Ընկերության բանկային հաշվին փոխանցելու,

1.3.2. Կայքում տեղադրված վճարային/բանկային քարտերով վճարումների ընդունման համակարգով,

1.3.3. Կայքում տեղադրված էլեկտրոնային դրամապանակ/ներ/ով վճարումների ընդունման համակարգով:

1.4. Առցանց վճարման դեպքում վճարողը համաձայնվում է դասընթացի մասնակցության գրանցման հետ միաժամանակ դասընթացի գումարը միանվագ վճարելու հետ:

1.5. Վճարված գումարների վերադարձ չի իրականացվում: Վճարը հանդիսանում է դասի գրանցման վճար և հետ վերադարձման ենթակա չէ, բացառությամբ կողմերի միջև այլ համատեղ պայմանավորվածության: Այն դեպքում, երբ Ընկերությունը կիրականացնի բարի կամքի դրսևորում գումարի հետվերադարձի համար, այդ դեպքում Ընկերությունն իրավասու է վճարային քարտով վճարման ընդունման և/կամ էլեկտրոնային դրամաապանակով վճարում/ներ/ի ընդունման համար բանկի և/կամ վճարահաշվարկային կազմակերպության կողմից գանձված սպասարկման վճարները չվերչադարձնել հաճախորդին, հաշվի առնելով քարտի և/կամ դրամապանակի սպասարկման համար բանկին վճարված միջնորդավճարների ծախսը: Տվյալ դեպքում ծախսը կարող է կազմել մինչև 2-10 տոկոս էլեկտրոնային դրամապանակաների դեպքում, իսկ բանկային քարտով վճարման դեպքում՝ 5 տոկոս:

1.6. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ գումարի վերադարձ իրականացվելու դեպքում վերադարձվող գումարից պահվում է տվյալ անձի համար թողարկված նույնականացուցչի արժեքը, որը կազմում է 50 (հիսուն) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ վերադարձի օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված հաշվարկային փոխարժեքով, սակայն ոչ պակաս, քան 15,000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ: Նույնականացուցիչը թողարկվում է վճարումը կատարելուց հետո 24 (քսանչորս) ժամվա ընթացքում և

տեղադրվում է https://helps.llc/certified-persons հղմամբ հասանելի էջում: Նույնականացուցիչի թողարկողը Helps LLC ընկերությունն է (Sacramento, USA), որը նույնականացուցիչի թողարկումն իրականացնում է Ընկերության հետ փոխադարձ համաձայնությամբ: Ընկերության կողմից դասընթացների մեկնարկը տրվում է բացառապես հայտարարված ժամկետներում և հայտարարված վճարման կարգով: Նշված ժամկետներից դուրս իրականացված հայտերի և վճարների համար անձը կրում է ինքնուրույն պատասխանատվություն:

1.7. Որպես գործընկերային թափանցիկություն կամ բանակցություն Ընկերությունը կարող է ժամկետների խախտումով վճարում կատարած անձի համար առաջարկել այլ գրաֆիկով դասընթաց, հակառակ դեպքում վերադարձնել գումարը՝ գանձելով 1.5 կետավ առաջացած ծախսերը:

1.8. Այն դեպքում, երբ Ընկերությունը դասընթացի մասնակցության համար գումարի գանձումից առաջ ներկայացնում է էլ. փոստով (eMail) հետադարձ գրությամբ հաստատման պահանջ, անձը պարտավոր է հաստատել իր մասնակցությունը, որից հետո Ըներությունն իրավասու է սառեցված, սակայն գանձված վճարը գանձել հաճախորդի քարտից կամ դրամապանակից:

1.9. Էլ. Փոստով հաստատված դասընթացների հաստատումից հետո վճարումները ամբողջությամբ վերադարձման ենթակա չեն:

1.10. Դասընթացին գրանցված անձի համար իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձի կողմից վճարումը կատարվում է բանկային փոխանցման կամ բիզնես վճարային գործիքների կիրառմամբ: Նշված եղանակներով վճարում կատարելով՝ տվյալ իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատեր կամ ներկայացուցիչները հաստատում և հավաստում է, որ տեղեկացված է/են և գիտակցում է/են, որ դասընթացի մասնակցության վճարը ենթակա չէ վերադարձման:

2. Վճարման պայմաններ

2.1. Վճարման պարտականությունն առաջանում է Կայքի կամ առանձին հայտի(Form) միջոցով համապատասխան հղման միջոցով դասընթացի գրանցման հայտ ներկայացնելու պահից:

2.2. Դասընթացներին մասնակցությունը հաստատվում է յուրաքանչյուր ամսվա առաջին իսկ դասին գրացման վճարը ամբողջությամբ վճարելու պայմանով, եթե այն իրականացվել է բանկային փոխանցման միջոցով: 1(մեկ) օր կամ 1(մեկ) շաբաթ ժամկետով կազմակերպվող դասընթացների համար դասի մասնակցությունը հաստատվում է դասի գրացման վճարը միանվագ վճարելու դեպքում: Վճարային քարտով և/կամ դրամապանակով վճարված դասընթացի վճարը վերադարձման ենթակա չէ, բացառությամբ 1.5 կետով սահմանված պահանջի կիրառման դեպքում:

2.3. Եթե մասնակիցն ինչ-որ պատճառով չի շարունակում դասընթացի հետագա ընթացքը, ապա միանվագ վճարված գումարը ենթակա չէ վերադարձման: Այն դեպքում, երբ ամսական պարբերականությամբ կազմակեպված դասերի համար առկա է տարաժամկետ վճարման պայմանով մասնակցություն, ապա վճարումն իրականացում է նշված/պայմանավորված ժամանակացույցին համապատասխան:

2.4. Բանկային հաշվեհամարին մուտքագրումն իրականացվում է «ՀԵԼՓՍ ՔԸՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ուղարկված վճարման հաշվում/նախահաշվում նշված հաշվեհամարին ոչ ուշ քան դասին մասնակցելու օրը կամ դասընթացի հրապարակային առաջարկում ներկայացված պայմաններին համապատասխան: Բանկային փոխանցմամբ վճարի անդորագիրը մասնակիցը ներկայացնում է Ընկերությանն առնվազն դասընթացի մեկնարկից 3(երեք) օր առաջ:

2.5. Եթե վճարումն իրականացվում է առցանց եղանակով, ապա վճարումն իրականացվում է պատվերի գրանցման պահին՝ կայքում հասանելի վճարման եղանակներով: Իսկ առանձ ընկերության կաողմից հայտարարված ժամանակացույցի կայքէջում գրացում և վճարում կատարված գրացումը ընդգրկվում է դրան հաջորդող առաջին իսկ դասընթացիների խմբում, իսկ անհատական դասերի դեպքում՝ դասընթացավարի գրաֆիկին համապատասխան:

2.6. Կայքում Ընկերության կողմից դասերի արժեքները նշված են **բացառապես ՀՀ դրամով**:

2.7. Առցանց եղանակով իրականացված վճարումների դեպքում, երբ վճարային/բանկային քարտը և/կամ էլեկտրոնային դրամապանակն արտարժութային է, վճարումը/փոխանցումը կատարվում է ՀՀ դրամով, իսկ փոխարկումը՝ համաձայն քարտը թողարկող բանկի կողմից սահմանված փոխարժեքի: Այդ դեպքում, երբ բանկը գործարքը կատարելու համար ՀՀ ԿԲ կողմից հայտարարաված փոխարժքը հաշվարկում է հավելուրդ(ավելացում) կատարելու միջոցով, այդ դեպքում Ընկերությունը պատասխանատվություն չի կրում հավելուրդի և արտարժութային փոխարկման արդյունքում առաջացած գումարային տարբերությունների համար:

3. Paylater-ով դասընթացի վճարումը

3.1. InecoMobile համակարգի միջոցով առցանց տրամադրվող վճարային սահմանաչափ է: Տրամադրվում է անկանխիկ եղանակով:

3.2. Paylater-ի միջոցով վճարումները հնարավոր է իրականացնել սքանավորելով Ձեր InecoMobile հավելվածով և կատարել վճարում այնպես, ինչպես InecoPay վճարումը:

4. Rocket Line-ով դասընթացի վճարումը

4.1. Նորարարական թվային ապառիկ է՝ ինովացիոն գործիք դասընթացի համար առցանց գումար ստանալով բացառապես դասընթացի նպատակով վճարում կատարելու համար:

4.2. Rocket Line-ից օգտվելով, վերադարձվող ապառիկ գումարը Դուք պարտավորվում եք սահմանված ժամկետում վերադարձնել «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ին:

4.3. Օգտվելով Rocket Line ապառիկից Դուք դառնում եք «Այ Դի Բանկ» ՓԲԸ ապառիկ հաճախորդ:

4.4. Rocket Line-ի միջոցով գրանցված դասընթացների չեղարկման դեպքում Ընկերությունը իրավասու է չեղարկված դասընթացի գումարից կատարել պահումներ 3,8%-ից 13%՝ կախված ապառիկի ժամկետից:

5. Տվյալների գաղտնիությունը

5.1. Կայքը գերակայություն է համարում հաճախորդների տվյալների գաղտնիության պահպանումն ու պաշտպանությունը: Հավաքագրված անձնական տվյալներն օգտագործվում են Կայքի «Գաղտնիության քաղաքականություն» բաժնի համաձայն, որը հանդիսանում է սույն պայմանագրի(Օֆերտայի) անբաժանելի մասը:

6. Վեճերի լուծման կարգը

6.1. Սույն պայմանների կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ցանկացած դեպքում, գրացման ժամանակ պայմանների ☑ նշումը հավաստում է, որ հայտատուն/ուսանողը լինելով չափահաս ու գիտակից անձ, համաձայնվել է սույն փաստաթղթում հրապարակված պայմաններին, դրա դիմաց չունի բողոքներ կամ առարկություններ:

6.2. Սույն կայքի միջոցով իրականացված ոչ բարեհաջող առցանց վճարման դեպքում ծագած վեճերը լուծվում են հետվերադարձի միջոցով, իսկ դրա անհրաժեշտությունը մեր կողմից չլինելու դեպքում Ձեր բողոքի վերջնական լուծումը կարող եք ստանալ դիմելով ձեր վճարային գործիքի (բանկային/վճարային քարտի կամ էլեկտրոնային դրամապանակի) թողարկողին՝ հետգանձման դիմում ներկայացնելու միջոցով:

7. Անցումայն դրույթներ

7.1. Սույն փաստաթղթի փոփոխությունն ուժի մեջ է մտնում կայքում հրապարակման պահից: Ուժի մեջ մտնելու ամսաթիվը հրապարակված և հաստատված է սույն փաստաթղթի վերևի աջ անկյունում նշված ընկերության տնօրենի հրամանի ամսաթիվը:

7.2. Յուրաքանչյուր դասընթացի վճարման պայմանները գործում են տվյալ պահին հրապարակված պայմաններին համաձայն:

7.3. Առաջացող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն չգալու դեպքում ՀՀ օրեսնդրությամբ սահմանված կարգով:

7.4. Սոցիալական ծախս կատարող անձանց շրջանակը որոշվում է ՀՀ օրեսդրությամբ և ենթաօրեսդրական ակտերով սահմանված կարգով:

*7.5. Դասընթացների ընթացքում տրամադրված նութերը, ֆայլերը, հղումները և ուսումնասկան փաստաթղթերը հանդիսանում են ուսանողի միայն անձնական կրթությանն ուղղված օգտագործման համար: Այն բիզնես նպատակով օգտագործելը, դրանով դասընթացներ կազմակերպելը և այլ անձանց փոխանցելը խստիվ արգելվում է: Արգելվում է նաև դասընթացների ընթացքում առանց դասընթացավարի և/կամ Ընկերության համաձայնության դասընթացների **տեսաձայնագրման** և **ձայնային ձայնագրման** իրականացումը: Համաձայնությունը հավաստվում է www.helps.academy կայքէջով. Ընկերության կողմից տրամադրված գրանցման այլ հայտով դասընթացի գրացման հայտը լրացնելու պահից սկսած՝ անժամկետ: Սույն դրույթը կիրառելի է Ընկերության կողմից դասընթացի ժամանակ շարունակական զարգացման նպատակով տրամադրված տեղեկատվության, դրանցով վկայագրման/հավաստագրման ողջ գործընթացի վրա՝*

ներառյալ դրա օգտագործմամբ այլ իրավասությունների ստացմամբ և այլ տեղեկատվությամբ, որոնք անձին հայտնի է դարձել ուսումնասռության ընթացքում:

7.6. *Սույն Պայմանների (հարպարակային առաջարկի/օֆերտայի) խախտման դեպքում Ընկերությունն իրավասու է ներկայացնել հատուցման պահանջ տվյալ դասընթացի գրացման վճարի 10(տաս)-ապատիկի չափով, բայց որ պակաս բան 1(մեկ) մլն. ՀՀ դրամ գումարի չափը: Եթե ուսանողը խախտել է սույն պահանջը մեկից ավելի դասընթացների մասով, ապա սույն դրույթը և հաշվարկման մեխանիզմները գործում են յուրաքանչյուր դասընթացի հաշվարկով առանձին-առանձին:*